

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված [Կ-369-14.09.2018-ՏՏԳԲ-011/0](#) «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երբ ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչության պետ՝ Գ. Պետրոսյան	1. Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «Կառավարությունը» բառով (երկու անգամ) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունները, որտեղ կիրառվում է «Կառավարություն» եզրույթը:	1. Ընդունվել է, կատարվել է համապատասխան	
	2. Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի վերջին պարբերության մեջ հստակեցնել, թե Կառավարությունն ինչ ձևաչափով է	2. Պարզաբանում: Սողանքային տարածքները սահմանվելու են սողանքային օբյեկտների	

	<p>սահմանելու սողանքային տարածքները, դիցուք՝ սողանքային տարածքների անվանումներ, սողանքային տարածքների ցանկ:</p> <p>Սույն առաջարկությունը բխում է Նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 6-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից:</p> <p>Այլ օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը:</p> <p>1. Նախագծի վերնագրում «լրացում» բառն առաջարկում ենք փոխարինել «լրացումներ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը:</p> <p>2. Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «2002 թվականի հունիսի 4-ի» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը:</p>	<p>բացահայտման, դասակարգման և կանխարգելիչ միջոցառումների իրականացման կազմակերպման բնագավառի լիազոր մարմնի կողմից:</p> <p>1. Պարզաբանում՝ նախագծի լրամշակման արդյունքում նախագծի 3-րդ հոդվածը հանվել է:</p> <p>2. Չի ընդունվել, քանի որ նախագծի 1-ին հոդվածի հղումը կատարվել է հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:</p>	
--	---	---	--

	<p>3. Նախագծի 1-ին հոդվածի «հետևյալ բովանդակությամբ» բառերն առաջարկում ենք հանել, իսկ Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում՝ «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:</p>	<p>3. Չի ընդունվել, քանի որ «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանելու առաջարկը հիմնավոր չէ:</p>	
	<p>4. Նախագծի 1-ին հոդվածում «Սույն մասով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սույն հոդվածով» բառերով (երկու անգամ), քանի որ, ըստ Նախագծի 1-ին հոդվածի՝ տվյալ նախադասությունները հանդիսանում են ոչ թե 1-ին և 2-րդ կետերի մասեր, այլ 30.1-րդ հոդվածի առանձին մասեր՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի:</p>	<p>4. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	
	<p>5. Առաջարկում ենք ապահովել Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի «զ» ենթակետի</p>	<p>5. Ընդունվել է, կատարվել է</p>	

	<p>համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի ձևակերպումներին և կարգավորումներին:</p>	<p>համապատասխան փոփոխություն</p>	
	<p>6. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները՝ առաջարկում ենք Նախագծով ներկայացվող 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 30.1-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 7-րդ և 8-րդ կետերով. «7) նախատեսվում է նոր փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը այն գետերի վրա. ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր. բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է. գ. որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:</p>	<p>6. Ընդունվել է, կատարվել է մասնակի փոփոխություն:</p>	

	<p>8) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է.</p> <p>ա. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում.</p> <p>բ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում.</p> <p>գ. ջրակոհամակարգերի պահպանման գոտիներում.</p> <p>դ. գետերի հոսքի ձևավորման տարածքներում.</p> <p>ե. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ.</p> <p>զ. անտառային տարածքներում, որոնք հատվելու են շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելիս, բացառությամբ՝ պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի: Սույն հողվածով նախատեսված գետերի ցանկը և/կամ սողանքային տարածքների ցանկը սահմանում է Կառավարությունը:»:</p>		
	<p>7. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված</p>	<p>7. Չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի N 541-Ն որոշման 1-ին կետի համաձայն ՀՀ օրենքը հրապարակվելուց հետո 20-</p>	

	<p>ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը: Հետևաբար՝ առաջարկվում է Նախագծում սահմանել լրացուցիչ հոդված՝ նախատեսելով Նախագծով առաջարկվող օրենքի եզրափակիչ մասն ու անցումային դրույթները, որտեղ հստակեցված կլինեն, թե երբ են Կառավարության կողմից սահմանվելու Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված նախատեսված գետերի և սողանքային տարածքների ցանկերը:</p>	<p>օրյա ժամկետում ՀՀ Ազգային ժողովում օրենքների նախագծերի քննարկման ժամանակ ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչը (հարակից զեկուցողը) ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացնում ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ վարչապետի որոշման նախագիծ, որում նշվում են մշակվելիք իրավական ակտերի նախագծերի ներկայացնելու ժամկետները:</p>	
	<p>8. Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածից հանել «(հզորության)» բառը՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի 2-րդ ենթակետը, համաձայն որի՝ համապատասխան լիցենզիայի անվանումն է՝ էլեկտրական էներգիայի արտադրություն</p>	<p>8. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն</p>	

	<p>(ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրությունը), հաղորդում, բաշխում, էլեկտրական էներգիայի մատակարարում (ներառյալ՝ երաշխավորված), մեծածախ առևտուր, այսինքն՝ չի նախատեսվում էներգիայի որպես հզորության արտադրություն:</p>		
	<p>9. Նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է Ջրային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված դեպքերի)» բառերով, մինչդեռ՝ նույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը որպես չափանիշ սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, հետևաբար՝ առաջարկում ենք ապահովել վերոնշյալ ձևակերպումների միասնականությունը:</p>	<p>9. Լրամշակման արդյունքում հոդվածը հանվել է:</p>	